Արձանագրություն N 2

«56ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Երևան, Հրաչյա Քոչարի փող. 13 շենք

«19» «09» 2016թ
ժ.12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Յոլչյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Շողիկ Քալաշյանը, Ելենա Մուրադյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկ Ղազարյանը

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
(Կարեն Յոլչյան)

Ընդունել՝ ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«Գագաթ» ՍՊԸ	Ք. Երևան, Դ. Մալյան 22, շինություն 66	ՀՎՀՀ 90025976, info@gagat.am Հեռ. ./+374/10 617480
2	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ	Ք. Երևան, Խանջյան փող. 50	ՀՎՀՀ 01204713, info@alfa.am Հեռ. ./+374/ 10 521356

Որոշում թիվ 1.
Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներիը ներկայացված է ստորև բերված աղյուսակում

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	Նախահաշվային գին	«Գագաթ» ՍՊԸ		«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ	
			Չի հանդիսանում ԱԱհ վճարող	Ընդամենը	առանց ԱԱՀ	Ընդամենը
1	Ուսուցման ինտերակտիվ համակարգ	2024000	1978000	---	1935000	2322000

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.
Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ամփոփվեց «Գագաթ» ՍՊԸ-ի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները	
			Մասնակցի անվանումը	
			«Գագաթ» ՍՊԸ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
1	Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին	Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար
2	Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.	Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար

Որոշում թիվ 3.

Հանձնաժողովը որոշեց «Գագաթ» ՍՊԸ-ի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց, մերժել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը և 1-ին տեղը զբաղեցնող ճանաչել «Գագաթ» ՍՊԸ-ին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին կետը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Կարեն Յոլչյան)

Որոշում թիվ 6.

Հանձնաժողովը որոշեց «56ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ք. Երևան, Հրաչյա Քոչարի փող. 13 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Կարեն Յոլչյան
Անդամներ՝		Ելենա Մուրադյան
		Շողիկ Քալաշյան
Քարտուղար՝		Հայկ Ղազարյան